ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
05.04.2018Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 12 անդամները:

Բացակայում են՝ Մելիք Գասպարյանը, Նորիկ Վարդանյանը և Արթուր Փանոսյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Շ. Սարգսյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը,Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը,Պ.Գաբրելյանը և գյուղերի վարչական ղեկավարները:
<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2018-2022 թվականների զարգացման ծրագիրը և տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
2. Չարենցավան համայնքի 2018 թվականի 1-ին եռամսյակի բյուջեի կատարման մասին հաղորդում:
3. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
4. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:
5. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող ինքնակամ կառուցված շինություններն օտարելու և վարձակալությամբ տրամադրելու մասին:
6. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքներն առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:
7. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 76 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>՝

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -12 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի 2018-2022 թվականների զարգացման ծրագիրը և տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

/Զեկ. Ա. Ծերունյանը/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թ. հունվարի 12-ի թիվ 01/16.2/80-18 հանձնարարականը՝ ***առաջարկում եմ*** հաստատել Չարենցավան համայնքի 2018-2022 թվականների զարգացման ծրագիրը և 2018թ. տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն N N 1,2 հավելվածների:Ուժը կորցրած ճանաչել Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 25-ի «Չարենցավան համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 24-Ն որոշումը:

Համայնքի ղեկավար . Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 12 **դեմ - 0** **ձեռնպահ** **-**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Չարենցավան համայնքի 2018 թվականի 1-ին եռամսյակի բյուջեի կատարման մասին հաղորդում:

/Զեկ. Պ. Գաբրելյան/

Առաջարկում եմ ընդունել ի գիտություն Չարենցավան համայնքի 2018 թվականի 1-ին եռամսյակի բուջեի կատարման մասին հաղորդումը

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-12 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին

/Զեկ. Պ. Գաբրելյան/

Հաշվի առնելով Սուրբ Փրկիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Իսահակ քահանա Մարգարյանի 2018 թվականի մարտի 26 թիվ 807/16, Կարենիս գյուղի բնակիչ Վլադիկ Ասատրյանի 2018 թվականի մարտի 27-ի թիվ 835/16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ ***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլնպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ.դրամ հատկացնել ***Իսահակ Մարգարյանին:*** Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից»սինթետիկ հաշվից 150.0 հազ.դրամ հատկացնել ***Վլադիկ Ասատրյանին:***

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ -12 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին::

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ ***առաջարկում եմ*** .թույլատրել 10 տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու համայնքի սեփականության հանդիսացող ***քաղաք Չարենցավան Օղակային փողոց թիվ 11 «Ա.Խաչատրյանի անվան ՄԵԴ» ՀՈԱԿ-ի շինության*** կիսանկուղային հարկից 211.6 քմ մակերեսով տարածք:

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-12 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող ինքնակամ կառուցված շինություններն օտարելու և վարձակալությամբ տրամադրելու մասին

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝***առաջարկում եմ.*** թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող օրինական ճանաչված ինքնակամ կառուցված շինությունները, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ սահմանված դրույքաչափերի, գնման նախապատվության իրավունքով օտարելու նշված շինությունը իրականացրած անձին:
Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն համարվող ինքնակամ կառուցված շինությունները, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով տրամադրել շինությունն իրականացրած անձին վարձակալական հիմունքներով՝ յուրաքանչյուր ամսվա համար սահմանելով վարձավճար՝
Հասարակական նշանակության շինությունների համար՝
- շինության 1 քմ-ի համար - 100 դրամ
- հողատարածքի 1քմ-ի համար - 100 դրամ
օժանդակ /ավտոտնակ, նկուղ/ և արտադրական նշանակության շինությունների համար՝
- շինության 1 քմ-ի համար - 50 դրամ
- հողատարածքի 1քմ-ի համար - 25 դրամ

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 12 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքներն առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 462 կետի ա) ենթակետով՝***առաջարկում եմ.*** թույլատրել համայնքի ղեկավարին՝ առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով տրամադրելու համայնքի սեփականության ներքո գտնվող մինչև 20.0 քմ մակերեսով հողատարածքները:

Հասարակական կառուցապատման նպատակով տրամադրվող հողատարածքների տարեկան վարձավճար սահմանել՝

1) մինչև 10.0 քմ մակերեսով հողատարածքների համար 14400 դրամ,

2) 20.0 քմ մակերեսով հողատարածքների համար 28800 դրամ:

Ավտոտնակների համար տարեկան վարձավճար սահմանել 6000 դրամ:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-12 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Լսեցին.

7.Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 76 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին;

/Զեկ. Շ. Սարգսյան/

1. Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի **«Մշակույթ»** ՀՈԱԿ-ի տնօրեն Ա.Աբգարյանի և Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի **«Մաքուր Չարենցավան»** ՀՈԱԿ-ի տնօրեն Վ.Աբրահամյանի գրությունները, համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետ Ա.Զաքարյանի զեկուցագիրը ***առաջարկում եմ*** Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 76 որոշման 11-րդ հավելվածի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ տողերը շարադրել նոր խմբագրությամբ:

1	«Մաքուր Չարենցավան» ՀՈԱԿ	*Տնօրեն*	-		1	200 000			200 000
2		*Փոխտնօրեն*	-		1	110 000			110000
4		*Հաշվապահ*	-		1	100 000			100 000
5		*Գործավար*	*Տեխնիկական -*		1	90 000			90 000

2. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 76 որոշման 12-րդ հավելվածի 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ տողերը շարադրել նոր խմբագրությամբ:

1	«Մշակույթ» ՀՈԱԿ	*Տնօրեն*	-		1	200 000			200 000
3		*Հաշվապահ*	-		1	110 000			110 000
4		*Կադրերի տեսուչ- գործավար*	-		1	100 000			100 000
6		*Գործավար*	*Տեխնիկական* -		1	90 000			90 000
7		*Համակարգչային օպերատոր*	*Տեխնիկական*		1	90 000			90 000

3. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 76 որոշման 1-ին հավելվածի 7-րդ տողի «11» թիվը փոխարինել «12» թվով և 4-րդ հավելվածի 5-րդ տողի «7» թիվը փոխարինել «6» թվով:

7	«Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ	*Դաստիարակ*	-		12	72752-77904			934848

5	«Լուսաբաց» մանկապարտեզ ՀՈԱԿ	*Դաստիարակ*	-		6	72752-77904			467424

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-12 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Վալերի
Բաբայան Նարեկ
Գրիգորյան Հակոբ
Գասպարյան Անատոլի
Դավթյան Կարեն
Խլղաթյան Արսեն
Եփրեմյան Տարոն
Վարդանյան Նորայր
Վարդանյան Սարգիս
Սահակյան Երեմ
Երիցյան Գագիկ
Պողոսյան Մնացական

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Շ. Սարգսյանը _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**